

Ուստի, երբ դուռը բացուեցաւ՝ տեսան Գուրգէն բարձրահասակ երիտասարդ, որ անխռով եւ զուարթ ներս մտաւ եւ Յուլակն ալ իւր ետեւէն, եւ ուրիշ ոչ ոք չի կար միատեղ, եւ որ անգամ մը ձեռքը կուրծքին դնելով բարեւ մը տալէ վերջ՝ շտկուեցաւ անվրդով դէպի սանդուխը, եւ ոտքը վրան չի դրած՝ «Տղաք,– գոչից,– ձիուն լաւ հոգ տարեք, կընդունիք ձեր վարձքը» եւ առանց ուրիշ բան խօսելու երբ երկու-երեք ոտք սանդուխ միատեղ առնելով մտաւ զինուց սրահը եւ անցնելով ընդունելութեան դահլիճը, ուր ցրտութիւն մը կը տիրեր, դարձաւ տղուն, որ լապտեր մը ետեւէն կը բերեր:

– Տղայ՛,– ըսաւ,– միթե՞ ամէնքը քներ են, Տիկինը, Օրիորդը քաշուի ր են իրենց սենեակները եւ ոչ ո՞ք չի կայ:

– Ոչ ոք չի կայ, իշխան,– պատասխանեց պատանին,– հիմա բերդապահն կ'ուզայ, ես նորեկ եմ, տեղեակ չեմ:

Ափս միջոցին Գուրգէն ուրախ, զուարթ կը շրջագայէր իւրաքանչիւր առարկայի վրայ աչքերը պտըտցնելով, երբ տղայն կանթեղները կը վառէր, բազմոցներու, գորգերու փոշին կը մաքրէր. եւ ուրիշ երիտասարդ մը նոյն միջոցին վառարանին մէջ դիզուած փայտերուն կրակ կ'ուտար: Եւ ահա բերդապահը եկաւ, միջահասակ մարդ մը իւր քառակուսի մորուռք, եւ կանգնեցաւ անշարժ, սպասելով, որ նախ իշխանը խօսի. իսկ Գուրգէն իւր արծուի աչքերը նորա վրայ շտկելով.

– Խուրեն եղբայր,– ըսաւ,– զիս չե՞ս ճանչեր, հին բարեկամները այսչա՞փ շուտով կը՝ մոռնաս:

– Կը ներես, իշխան,– պատասխանեց Խուրեն կասկածոտ՝ կերպով մը,– մենք մեծ իշխանի Աշոտոյ եղբայրը միայն կը ճանչենք Գուրգէն Արծրունի:

– Մոռցա՞ր ուրեմն դարձեալ Արծրունի, Ապուլպեւճի որդի Գուրգէնը, որ այս ամրոցիս մէջ ութը տարի անցուց Ռշտունեաց Մուշեղին յանձնուած: